

Ուսում` քանտախցում. ցմահ դատապարտյալն ընդունվում է մագիստրատուրա

By Marianna Grigoryan and Siranouish Gevorgyan
ArmeniaNow reporters

✉ [Ուղարկել րնկերոջը](#) | [\(0\) Կարծիքներ](#) | [Տպել](#) | [SHARE](#)



[Մեծագնեղ նկարը](#)

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկը դառնում է լսարան

Արսեն Արծրունին կավարտի «Ուրարտու» գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի համալսարանի հոգեբանության ֆակուլտետի մագիստրատուրան երեք տարի հետո, երբ դառնա 48 տարեկան:

Նա սովորական տարեց ուսանող չէ, նա ընդհանրապես սովորական ուսանող չէ:

Արծրունին «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի (ՔԿՀ) կալանավոր է` ցմահ ազատազրկված ահաբեկչությանը, այդ թվում` կանխամտածված սպանություններին առնչվող հանցագործությունների համար:

Արծրունին մեկն է այն 11 անձանցից, որոնք 1996 թ. դեկտեմբերի 10-ին «Դրոյի» տխրահռչակ գործով դատապարտվեցին մահվան (ելնելով Եվրախորհրդի առջև ստանձնած պարտավորություններից` 2003 թվականին մահվան դատավճիռը փոխարինվեց ցմահ ազատազրկմամբ):

Արծրունին ծնվել է 1961-ին Լիբանանում: Հոգեբանության բակալավրի աստիճան է ստացել Լիբանանի «Հայկազյան» քոլեջում: Հայաստան տեղափոխվել է 1989-ին` Հայաստանում և Արցախում համակարգչային դասընթացներ կազմակերպելու նպատակով:

Արծրունին ձերբակալվել է 1994-ին և մինչև 2000-ի հունվար պահվել Ազգային անվտանգության ծառայության մեկուսարանում: Այնուհետև տեղափոխվել է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի մահապարտների խուց և պատիժը կրում է այնտեղ:

Դատարանի վճռով զրկվելով իր առաջին գործը` համակարգչային ուսուցումը, իրականացնելու հնարավորությունից` նա համակարգիչ և օտար լեզուներ է սովորեցրել բանտի իր բախտակից ընկերներին:

Իսկ այժմ էլ մտադրվել է դառնալ բանտի գիտական ամենաբարձր կոչում ունեցող կալանավորը:

«Նման նախադեպ Հայաստանում չի եղել: Քրեակատարողականի ղեկավարությունը դրական է վերաբերվում երևույթին: Եթե գրագետ երիտասարդ է, ինչո՞ւ չընդառաջել նրան,- ասում է «Նուբարաշեն» ՔԿՀ սոցիալ-հոգեբանության գծով պետի տեղակալ Էդիկ Հովհաննիսյանը: - Արսենը խիստ ռեժիմի դատապարտյալ է, ես ինքս եմ տարել-հանձնել դիմումը, հանդիպել համալսարանի ռեկտորի հետ, ներկայացրել իրավիճակը, պայմանավորվածություններ ձեռք բերել: Նա ինձ նույնիսկ շնորհակալագիր էր գրել այդ ամենը կազմակերպելու համար»:

Համալսարանը նախապես դիմորդին էր ուղարկել քննական հարցաշարը և համապատասխան գրականություն, որպեսզի նա կարողանա պատրաստվել քննություններին:

Նշանակված օրը ընդունելության հանձնաժողովի երեք անդամներ այցելել են «Նուբարաշեն» ՔԿՀ, որտեղ հատուկ պատրաստված սենյակում, որտեղ կային համակարգիչ և գրականություն, անցկացվել է մագիստրատուրայի ընդունելության քննությունը: Նոյեմբերի 3-ին Արծրունին գերազանցությամբ հանձնել է քննությունը:

«Պետք է ասեմ, որ ցանկացած բուհ ուրախ կլիներ այսպիսի ուսանող ունենալ: Իմ անձնական տպավորությունը գերազանց էր,- «ԱրմենիաՆաուին» ասաց «Ուրարտու» համալսարանի ռեկտոր, ընդունելության հանձնաժողովի անդամ Սեդրակ Սեդրակյանը: - Նա խոր գիտելիքներ ուներ հոգեբանությունից, և զգացվեց, որ ազատագրկման տարիների ընթացքում էլ է կատարելագործել դրանք, քանի որ լավատեղյակ էր և արտասահմանյան հոգեբաններին, և հոգեբանության ասպարեզում տեղի ունեցող միտումներին»:

Ըստ քննական հանձնաժողովի անդամների՝ երբ Արծրունուն տեղեկացրին, որ ընդունվել է մագիստրատուրա, նա ասաց, որ իրականացել է իր ութ տարվա երազանքը: Դատապարտյալն ութ տարի շարունակ դիմել է տարբեր բուհեր և միայն այս տարի է նրան հաջողվել ստանալ կրթության և գիտության նախարարության համաձայնությունը:

«Սովորելը, ուսում ստանալը ամեն մարդու սահմանադրական իրավունքն է՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղ է գտնվում այդ մարդը: Պետք էր ընդամենը բարի կամք դրսևորել ու ընդառաջել երիտասարդին,- կարծում է Սեդրակյանը: - Օրենքը չի

արգելում, որ ցմահ ազատագրկվածը կրթությունը շարունակելու հնարավորություն ստանա»:

Մեդրակյանի հավաստմամբ՝ ուսման 3 տարիների ընթացքում ուսանողը ստուգարքները կհանձնի գրավոր, իսկ կիսամյակային քննությունների ժամանակ «Նուբարաշեն» կայցելեն համալսարանի դասախոսները՝ ամեն ինչ նախապես համաձայնեցնելով ՔԿՀ ղեկավարության հետ:

«Արծրունու դեպքից հետո ուրիշ դիմում չենք ստացել, բայց ես գիտեմ, որ նրա բախտակից ընկերները ևս շատ դրական են վերաբերվում այս երևույթին,- ասում է Հովհաննիսյանը: - Արսենի համոզմամբ՝ հոգեբանական գիտելիքները անհրաժեշտ են իրեն կայուն մնալու, հոգեկան ամբողջությունը պահպանելու համար: Կարծում եմ, որ այդ սոցիալ-հոգեբանական լարված պայմաններում, այդ միկրոմիջավայրում Արսենը կկարողանա դրական դեր խաղալ»:

Երեք տարի անց Արսեն Արծրունին կստանա հոգեբանության մագիստրոսի որակավորում:

http://www.armenianow.com/hy/features/6807/brain_cells_lifer_enters_mas